ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2020 թվականի N 50

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջները, ինչպես նաև քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի), հողաշինարարի որակավորման վկայական (N 0345) ստացած անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը՝ ***որոշում եմ.***

1. Գագիկ Հայկի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 1 փողոց N 72 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության 0.08 հա բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 420.14 քմ արտաքին մակերեսով շինությունները՝ 172.4 քմ արտաքին մակերեսով նկուղը, 235.0 քմ արտաքին մակերեսով 1-ին հարկը և 12.74 քմ արտաքին մակերեսով պարիսպը ճանաչել օրինական, քանի որ.
   1) դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
   2) դա կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 172.4 x 1300 = 224120 /երկու հարյուր քսանչորս հազար մեկ հարյուր քսան/, 235 x 1300 = 305500 /երեք հարյուր հինգ հազար հինգ հարյուր/, 12.74 x 780 ≈ 9940 /ինը հազար ինը հարյուր քառասուն/ (ընդամենը՝ 539560 /հինգ հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր վաթսուն/) դրամի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության ԱԳԿԿ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ նշված շինությունները գնահատելու և պետական գրանցման տալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի հունիսի 23
գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2020 թվականի N 51

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Արամ Աղաջանյանին և Գալյա Ալեքսանյանին սեփականության իրավունքով պատկանող 002-007 ծածկագրի (վկայական N 1409798, 0.22 հա) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել 2 փողոց 2 նրբանցք 3 փակուղի N 1 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի հունիսի 23
գ. Նոր Արտամետ